ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 հունվարի 2025 թվականի թիվ 1–Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 3-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 5-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենիքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 18-րդ հոդվածների, «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 737-Ն որոշման 10-րդ, 12-րդ, 13-րդ, 17-րդ, 18-րդ և 20-րդ կետերի դրույթները և Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 706-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 1080-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի 2025 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2024 թվականի հունվարի 3-ի <<Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի 2024 թվականի հաստիքացուցակը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2023 թվականի հունվարի 4-ի թիվ 2-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 3-Ա որոշումը:

Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-01-03 13:09:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

2025թ.հունվարի 3

ք.Իջևան